

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԻ ԱՐԴԱՐԱՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ

ՍՄԿԿ ԿԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՄԻԽԱՅԻԼ ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

Կրեմլ, Մոսկվա

Խորին հարգանքով ողջունում ենք Ձեզ Սովետական Հայաստանի ու նաև արտասահմանի երկու միլիոն հայ հավատացյալների անունից մաղթելով Ձեզ լիակատար հաջողություններ մեր մեծ երկիրը վերակառուցելու Ձեր պատմական առաքելության հանապարհի վրա:

Իբրև Հայ Եկեղեցու պետ այս պահին պարտք եմ զգում Ձեր ազնիվ ուշադրության հանձնել, որ համայն հայ ժողովուրդը սպասում է Ձեր բարի որոշումը Լեռնային Ղարաբաղի հայության արդար սպասումների իրականացման համար:

Հայերը միշտ մնացել են և կմնան եղբայրները ռուս ժողովրդի և հավատարիմ քաղաքացիները Սովետական Միության: Դա նրանց պատմությունն է, նրանց ճակատագիրն է, նրանց ապագան է:

Թույլ տվեք հավատալ, որ ռուս ժողովրդի խիղճը չի թողնի, որ հայերը ընկղմվեն հուսահատության մեջ:

Մնում ենք աղոթող Ձեր արևշատության և ընտանեկան երջանկության համար:

Մնում ենք աղոթող մեր բազմալեզ մեծ հայրենիքի անսասանության ու աշխարհի խաղաղության համար:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
17 հուլիսի 1988 թ.